





12004

12005

235

8-22

4084

2

~~235~~

796-43

6-22

1084 Թ. Ե. Գ. Կ. Վ. Պ. Պ.

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՍՐԸ Ա Հ Ա Յ Ա Յ Ա

# ՓԻԼՈՄԵՆԵՅ



Պ. Ե. Ն. Պ.

1836



2М.4-45-61

կարդապուն պատճեալ զիմա ըմա  
կաստ , ըմա Արք մահմացեալ  
է ԱՅ, ՅՈՒՆՈՒՅ ՈՒՄՆ

Ես կարծ ծանօթութիւնն որ  
պիտի տանք սրբուհի Փիլոմենային  
վրայ , համառօտցընելով առինք  
Փրանկիսկոս նարոլիդան յարգելի  
քահանային իրեք հատոր գործ-  
քէն , որնոր աս Արբուհւոյս անունը  
հոչակող ու պատմիչն եղաւ :

Եւելորդ կըսեպենք ետեէ ըլ-  
լալ աս Արբուհին գովելու , ինչու որ  
անոր այնչափ գործած հրաշքները  
բաւական զինքը կըդովեն . արե-  
մուտք ու արեելք հիմայ անոր ա-  
նունը կըպատմըվի , անոր գործած  
հրաշքները կըհոչակվին , ու շատ

տեղ անոր պատկերը կըպըտըտի  
բժշկութեան դեղի տեղ, ուստի  
ուրիշ քարոզողի կարօտութիւն  
չունի, իր գործքերը զինքը կըքա-  
րոզեն: Եւ որովհետեւ մեր վախ-  
ճանն էր տեղեկութիւն միայն տալ  
մեր Աղքին սուրբ Փիլոմենային վը-  
րայ, որուն մեծ ջերմեռանդութիւն  
ընելնին մեր ականջն ալ հասաւ,  
ու մեղի յորդոր եղաւ աս գրքոյկը  
շինելու, անոր համար քանի մը  
հրաշքները միայն պատմեցինք  
վերջը, կարդացողները բոլորովին  
չիզրկելու համար: Յուսալով մեր  
Աղքին հոգեոր օգուտը աս փոքր  
աշխատութիւնը յանձն առինք 'ի  
փառս Աստուծոյ և 'ի պատիւ Ալր-  
բուհւոյս:

Պ Ե Տ Մ Ա Խ Թ Ֆ Է Կ  
Ս Բ Բ Ո Ւ Հ Ե Ո Յ Շ Ե  
Փ Ւ Լ Մ Ե Ն Ա Յ Ի

---

Բարթուղիմէոս անունով ժո-  
ղովրդապետ մը Երբոր Կաբոլիէն  
Հռովմ պիտի Երթար 1805ին Ե-  
պիսկոպոս ձեռնադըրվելու համար ,  
վերոյ ըսած Փրանկիսկոս քահա-  
նան իր մեծ բարեկամն ըլլալով ,  
բռնադատեց զանի որ իրեն հետ մէկ  
տեղ ընկերանայ : Ծակալէտ և  
աս քահանան , որ գեռ կենդանի  
է ու ամմէնուն առջել մեծ պատիւ

ու յարդութիւն ունի իր իմաս-  
 տութեանը ու մանաւանդ սրբ-  
 քութենը համար, չեր ուղեր ա-  
 մենեին իր տեղէն հեռանալ, բայց  
 չիհամարձակելով եպիսկոպոսին  
 կամացը դէմ գնել ակամայ կա-  
 մօք յանձն առաւ անոր հետ եր-  
 թալու: Անյիսին առջի օրը ճամ-  
 բայ ելան ասոնք, ու նոյն ամսոյն  
 կին հասւն Հռովմ: Դէպ ՚ի կէսը  
 Անյիսին ելան ասոնք Արբոց մա-  
 սունքներուն գանձարանը տեսնե-  
 լու գացին: Ա բակեցու եպիսկո-  
 պոսը ասոնց սիրով ընդունելու-  
 թիւն ընելէն ետքը, գանձարանին  
 չորս կողմը առաւ պըտուտցուց:  
 Երեք Արբոց մարմին տեսան ան  
 տեղը, որոնց անուններն ալ կային.  
 ասոնցմէ մէկը մարդու մը մարմին

էր, մեկը երկու տարվան տղու մը,  
որ մարտիրոս եղած էր առջի հալա-  
ծանքին ատենը, որնոր 54ին \*Աւ-  
րոն ամբարիշտ Կայսրը հանեց, ու  
մեկալը սրբուհի Փիլոմենային :  
\*Ասրովիէն Հռովմ գալու ատեն-  
նին յայտնած էր եպիսկոպոսին  
Փրանկիսկոս քահանան, թէ շատ  
մեծ բաղձանք ունի սուրբի մը ամ-  
բողջ մարմին ձեռք բերելու :

Իսյց շատ երկայն բարակ չե-  
խօսելու համար չե՞ք պատմեր,  
թէ ինչովիսի կերպով Փրանկիս-  
կոս քահանան աս Արքուհիին  
մարմինը ձեռք բերաւ : Խ' որ  
ուրիշ Առւրբերուն վարքին մէջ  
կըկարդանք անոնց մարմնոյն փո-  
խադրութեանը վրայ, ասորն ա-  
մէնէն ալ գերտղանց է նոր նոր

հրաշքներովը, որ գործեց Արբու-  
 հին Հռովմէն "Աարոլի փոխադրո-  
 վելու ատենը: Յուլիսին առջի օրն  
 ելան Երկուքն ալ Հռովմէն. Ե-  
 պիսկոպոսը անծանօթ սուրբի մար-  
 մին առաւ, իսկ ահանան սրբուհի  
 Փիլոմենային: Երկուքն ալ Յուլի-  
 սին մէջ "Աարոլի հասան, բայց յա-  
 ռաջքան Արբուհւոյն մարմինը  
 Առւնեանօ քաղաքը տանելնին,  
 ուր Փրանկիսկոս կըքնակէր, իջան  
 ասոնք Անտոն Տորբէս անունով  
 վաճառականի մը տուն, ու հոն ա-  
 նոր մատուանը մէջ Արբուհւոյն  
 մարմնոյն սնտուկը բացին, նայե-  
 ցան ու պատրաստեցին հանդի-  
 սութեամբ Առւնեանօ տանելու:  
 Ասսուրբ մարմինը գտնըված էր  
 Պիոս եօթներորդ սրբաղան քա-

Հանայապետին ատենը 1804ին  
Մայիսին 25ին Պրիսկիղեայ անու-  
նով գետնի տակը եղած գերեզ-  
մանատանը մէջ\*) որ Ալարեաըս-  
ված ճամբուն վրայ է : Խսկաս մար-  
մընոյս քովի եղած գերեզմանա-  
քարն էր Դիոկղետիանոսին ամ-

\* Ըստ հաստիաց Եղիշելու այնչափ  
իւլյան ժամանակակից առաջ առա-  
ջինը, որ իսկ իր ենց գոտին իւտիայ-  
ին հելանասն լրաց է առաջին պահանու-  
խառնելին, և իսկ գուշը ըստ իւրակա-  
նացին առ իր ենց դասն ըստ պարտի-  
կին թշր իւլյանը էլին, զանազան  
որ շաբաց լեկ հելանասն լրաց պա-  
հանու, այլ էն առ իւրանցը լրաց, ինչ-  
ուկա շաբատ առ գուշը իւրանը էն . առաջ հա-  
յան առ գուշը առ իւրանը ծագուի գու-

բարիշտ կայսեր ատենէն, որ տաս-  
ներորդ հալածանքը քրիստոնէից  
դէմ հանեց 303ին. վասն զի գե-  
րեզմանատան ան կողմն թաղված  
մարմինները ուր որ Արքուհի-  
ին մարմինը գտնրվեցաւ ինչպէս  
պատմութիւնները կրվկայեն՝ աս  
սնողորմ բռնաւորին ժամանա-  
կէն են :

Եւս աւաններ շնորհ էին: Բայց էր-  
բոր Անրիի ուստի առհանուցառը էր  
ուստի 304ին, ուշ մը Պահուղեառա-  
նունէն հալածանքին հուրը Թղմա-  
ցած սրբանի առին գերեզմանա-  
տունու շնորհ, ու ամենուն առջելուն  
Արքոց մարմինը առանաւ հոն լւա-  
րձ, որովհետ զի հելլանուսներուն  
յիշուն առահութը ըլլան :

Աս քարը հիմայ Արբուհւոյն  
մատուան մէջն է, ու հին անցած  
գացած բաներուն յիշատակ մըն է,  
որուն վրայ Պարտենիոս երևելի  
նոր հնախօս հեղինակն ալ կըխօսի:  
Բայց աս գիրերէն չիմացվիր, թէ  
արդեօք Փիլոմենան յոյն է թէ  
հռովմայեցի և կամ թէ ուրիշ աղ-  
գէ մը : Իսկ քարին վրայ այսպէս  
դրված կայ

LUMENA PAX TE CUM FI

ԼՈՒՄԵՆՆ. ԾՐԱԲԱ ԹՎ. ՔՅՈՒՄ ԳՖ  
ԽԱՀպէտ և աս ֆէ մասնիկը Լու-  
մենայ բառէն բաժնըված դտան  
գերեզմանաքարին վրայ, բայց ո-  
րովչետե քարը իրեք կտոր էր, ո-  
րոնք մէկը մէկու քով դրված կայ-  
ին, կարծը վի որ թաղելու ատեն-

Նին շփոթութեամբ առաջ դնելու  
տեղ՝ աս կտոր քարը վերջը դրած  
են. բայց ինչպէս որ գտան նոյն-  
պէս կըպահեն հիմայ ալ վերջը  
դընելով աս կտոր քարը, որնոր  
մեր անձինքներէն ալ իրեք հոգի  
անցեալ տարի տեսան։ Ուստի այս-  
պէս պէտք է կարդալ վերի խօսքը։  
ՖԻՌՈՒՄՆԵՐ. ԾՐԱԲԱ ԹԱՅՔՈՒՄ  
Փէլունենա ևաղաղութենա ընդ ժեկ։  
Ֆէ մասնիկին վերջը դրվելուն  
աս պատճառը տալն աւելի հաւա-  
նական է ու բնական, քան թէ հին  
ազգաց աջ կողմանէ ձախ կողմս  
դրելու սովորութենէն մեկնել, որ  
շատ գժուարութեանց տակ կիյ-  
նայ։

Խաղաղութիւն ընդ քեզն ալ  
կըցըցունէ, թէ աս քարը հալա-

ծանքին ատեն շինված է, վասն զի  
 հալածանքէն ետքը եղած գերեղ-  
 մանաբարերուն վրայ աս կերպ  
 գրված կըդտնըվի ԻՆ. Ռ. ՁԱ.՝ Ի Էտ-  
 պող-Եւեան կամ 'է հանգստիւն :  
 Ի այց պէտքը չէ աս Փիլոմենան մէ-  
 կալ սրբուհի Փիլոմենային հետ  
 շփոթել, որուն յիշատակը հռով-  
 մայեցւոց վկայաբանութիւննեւ-  
 սին 5ին կըկատարէ : Երկու հա-  
 րիւր տարի է որ իբրև կոյս ու չէ  
 թէ իբրև մարտիրոս կըյիշատակ-  
 իի երկրորդ Փիլոմենան, որուն  
 մարմինն ալ Առն Աէֆէնիօ ըսված  
 Ախտերսականներուն եկեղեցւոյն  
 մէջ կըպատուըվի, և իր պատմու-  
 թիւնն ալ շատ ետքն է հիմակ-  
 վան նոր յայտնըված սրբուհի Փի-  
 լոմենայէն :

Ա երի ըսած քարին վրայ քաշ-  
 ված կան խարիսխ մը այսինքն՝  
 նաւի երկաթ , նետեր , արմա-  
 ւենի մը , ձաղանք ու շուշաններ :  
 Խարիսխը իբրև խորհրդական նը-  
 շան հաստատութեան ու ապա-  
 ւինութեան՝ շատ հին քարերու վր-  
 այ կրգտնըլին , բայց երբեմն կը-  
 նըշանակէ նաև մարտիրոսութեան  
 գործիք մը , վասն զի անոր վրայ  
 կըկապէին մարտիրոսներուն մար-  
 մինը ու ծովը կամ գետը կընե-  
 տէին : « Այնպէս նետերն ալ իբրև  
 զարդարանք մը կրգտնըլին շատ  
 քարերու վրայ , ու երբեմն ալ իբ-  
 րև նշան կետաղը ութեան , բայց  
 սրբուհի Փիլոմենային քարին վրայ  
 կերևնայ թէ նոյնպէս չըլլայ , ո-  
 րովհետեւ պինդ երևելի նետը 】 ու-

մենա բառէն ետքն է, ու ասով  
կուզէ ցըցունել որ Փիլոմենան չէ  
թէ ջուրի մէջ խղդըված է, հապա  
նետով խոցված է, թէպէտ և մէ-  
կալ երկու նետը զարդարանքի մը  
պէս թէ ու ՚Բառայ բառերը մէ-  
կըզմէկէ կըբաժնեն :

Խսկ արմաւենին անթիւ խոր-  
շըբդական մեկնութիւններ ունի  
Եղիպտացւոց ու Լատինացւոց քո-  
վը, բայց սովորաբար յաղթու-  
թեան կամ յաղթանակի նշան է,  
ինչպէս Յովհաննու առաքելոյն  
յայտնութեան մէջն ալ կըզուրցէ  
Արբոց համար, թէ ձեռքերնին  
արմաւենի ունէին : Աս արմաւե-  
նիին ճիւղը կըդտնըվի նաև շատ  
մարտիրոսներուն գերեզմանաքա-  
րին վրայ, որոնք կամ գաղաննե-

րուն առջելը նետված և կամ  
կրակով պյուած են : Զաղանքը կամ  
խարազանը (Պահչեն) դուրսի քաշ-  
վածէն կերեայ թէ կաշիէ եղած  
ըւլայ , որուն ծայրերը կլոր օղեր  
(Հալսաներ) կան վրան բոլոր փու-  
շի պէս խայթոցներով , և ասով  
չէ թէ միայն մարտիրոսները կը-  
ծեծէին զուրցելու է , հապաթէ ա-  
նոնց մարմինը կտոր կտոր կընէին :  
Ը ուշանները քաշված են Ֆէ վան-  
կին քովը որոնք անոր կուսութեան  
անարատութիւնը կըցըցունեն :

Արովէնետև բոլոր ունեցած ծա-  
նօթութիւննիս սրբուհի Փիլոմե-  
նային վրայ՝ հրաշալի տեսիլքով  
մը ինքը յայտնած է , ինչպէս աս  
դրքուկիս մէջ քիչմը ետքը պիտի  
պատմենք , անոր համար քարին

վրայ եղած նշաններուն մեկնու-  
 թիւններն ալ նոյն տեսիլքէն առ-  
 նըված են : Իսայց առ ըստածներէս  
 դատ կայ աման մ'ալ անոր մար-  
 մընոյն քովը լեցուն իր արիւնովը,  
 որ կըցըցունէ թէ անոր գլուխը  
 կըտրըված, կամ թէ ուրիշ կեր-  
 պով մը հաւատոյ համար իր ա-  
 րիւնը թափածէ : ԱԿԵՂԻԹՈՂ կու-  
 տանք ան մեծ հրաշքները որ ա-  
 րիւնը գտնելու ատեն եղան, ու կը-  
 շատանանք պատմելով միայն՝ թէ  
 Անտոն Տորբէս վաճառականին  
 տունը Արբուհին մարմինը նըս-  
 տելու ձեռով կարգաւորելէն և ըգ-  
 դեստ հազցունելէն ետքը, անկից  
 առին հանդիսութեամբ Անւեա-  
 նօ տարին, ուր Անըն ունըն իւ-  
 ստացէն ըսված ժամուն մէջ աւագ

Խորանին աջ կողմը զատ խորանի  
մը մէջ դրին 1805ին (Օգոստոսի  
10ին, ուր անհամար բազմութիւն  
կերթան յարդելու :

Ահաւասիկ մինչև հիմայ համա-  
ռօտելով պատմեցինք թէ ինչպէս  
դըտնըվեցաւ աս Արքուհիին մար-  
մինը, ու թէ ինչպէս ռոռվմէն՝ Կա-  
բոլի տարին, թող տալով անթիւ-  
դիսուածները, որ փոխադրու-  
թեան ատենը պատահեցան. Հիմա  
տեսնանք թէ ով է եղեր ասի-  
կայ, ու ինչ գլուխը պատահեր  
է :

Աս համառօտ տեղեկութիւնը  
որ պիտի տանք, նոյն իսկ սրբու-  
հի Փիլոմենան յայտնած է իրեք  
զատ մէկզմէկէ հեռու ու անծա-  
նօթ մարդիկներու, ասոնցմէ մէ-

կը սրբակեաց քահանայ մըն էր ,  
որ հիմայ կանոնիկոս եղած է , մէ-  
կալը աղքատ ու բարեպաշտ ար-  
հեստաւոր մըն է , իսկ երրորդը  
կուսան մըն է ։ Ա, արոլի ։ Աս կու-  
սանը Փրանկիսկոս քահանային  
խորհրդով իրեն եղած յայտնու-  
թիւնը գրեց . բայց մենք թող տա-  
լով ան հրաշքները որ տեսիլքին  
ճշմարտութիւնը կըհաստատեն ,  
միայն կըպատմենք ինչ որ աս կու-  
սանը լսեց Արքուհիին մարմնոյն  
փոխադրութենէն քսանը եօթը  
տարիետքը , որ է լսել չորս տա-  
րի առաջ :

,, Աս էի (կըսէ Փիլոմենան աս  
,, կուսին ) յունաստանի մէջն եղած  
,, զաւառներուն մէկուն թագաւո-  
,, րին աղջիկը , իմ մայրս թագաւ-

„ւորական ցեղէ էր : Եւ որով  
 „հետեւ հայրս ու մայրս զաւակ  
 „չունէին , անոր համար իրենց  
 „սուտ աստուածներուն անդադար  
 „աղօթք կընէին ու ընծաներ կու-  
 „տային , որպէս զի զաւակ մը ու-  
 „նենան : Այեր ընտանեացը մէջ  
 „հռովմայեցի բժիշկ մը կար Պուր-  
 „ղիոս անունով : Ասիկա սուրբ է  
 „ու երկինքն է , թէպէտ և մար-  
 „տիրոսութեամբ չիմեռաւ : Իմ  
 „ծնողացս կուրութեանը վրայ կը-  
 „ցաւէր ասի , և մասնաւորապէս  
 „իմ մօրս ունեցած տրտմութիւնը  
 „իր ամլութեան վրայ զինքն ալ  
 „կըտրտմեցընէր : Հոգին սուրբ  
 „առօր սիրտը շարժելով հոգի ա-  
 „ռաւ երկուքին հետ հաւատոյ վը-  
 „րայ խօսելու ու ածային ապա-

„Եինութեամբ համարձակ խոստաւ-  
 ցաւ անոնց, թէ զաւակով կօրհ-  
 նըվին, թէ որ նախ մկրտըվելու  
 ըլլան: Աստուծոյ շնորհքը ասոր  
 իսօսքին ազդեցութիւն տուաւ,  
 ու աս ազդեցութիւնը լուսաւո-  
 րելով իմ ծնողացս միտքը ու  
 շարժելով անոնց սիրտը երկուքն  
 ալ քրիստոնեայ եղան: Վիչ  
 մը ժամանակէն ետքը յղացաւ  
 մայրս զիս ծնաւ, ու անունս  
 Լումենայ դրաւ նոր տարւոյն \*)  
 մէջ Հունվարին տասնին:

\*) Ո՞ւ դառնին ըլլուց չյայսանելլ Ալլ-  
 բուհն: Դիմոկը ականոնին լու-  
 գա-սպա-լեւու անեց 284 և մի-  
 լե-304. աստի առ մէջոյն մէջ  
 ձեռած ովերին ըլլոյ:



„լունոր համար լումենայ կանչեց  
 „ինծի, ինչու որ հաւատոյ լուսին  
 „մէջ յղացայ ու ծնայ, որուն մէջ  
 „իմ ծնողքս ալ բարեպաշտու  
 „թեամբ կապրէին։ Երբոր մկրը  
 „տրվեցայ նէ դրին անունս Գի  
 „լումենայ լուսին դուստրը <sup>\*</sup>),  
 „որնոր իմ հոգիս լուսաւորեց մը  
 „կըրտութեան մէջ առած շնորհ-  
 „քովս։ Իմ ծնողացս վրաս ունե-

\*) Գի լուսիներէն ֆիլիա, գուստու  
 բառին իւճառալան է. իսի լու-  
 մենա՝ լումէն լոյս բառէն եւ-  
 լուս, Գի լումէնա սուլքէբ-  
 րե լու դուստր լուսաւոր իսի  
 լուսոյ սուլք է, ուստի լուսին  
 դուստրը սուլք, աս իսուլք իմո-  
 ցունեւ։

„ցած սէրերնին ու գըգուանքնին  
 „մանաւանդ հօրս անպատմելի էր :  
 „\*այրս ժամ (ստեղն) մը ա-  
 „ռանց ինձի չէր կրնար ըլլալ .  
 „ասոր համար երբոր տասւիրեք  
 „տարվան էի զունվարին մէջ զիս  
 „իրեն հետն առաւ ։ ոռովմ տա-  
 „րաւ , ուր հարկ եղաւ անոր եր-  
 „թալ անիրաւ պատերազմի մը  
 „պատճառաւ , որնոր հպարտ ու  
 „ամբարտաւան Դիմկղետիանոս  
 „կայսրը անոր կըսպառնար : Ողոր-  
 „մելի հայրս զօրութեամբ բռնա-  
 „ւորէն շատ տկար ըլլալով , դնաց  
 „։ ոռովմ խաղաղութեան ճար մը  
 „գըտնելու : Պանաց որ մայրս ու  
 „զիս ալ մէկտեղ բռնաւորին առ-  
 „ջել թող տան : Երբոր խօսելու  
 „անոր հետ հրաման եղաւ , ամ-

„մէնքս մէկտեղ պալատը դացինք:  
 „Դիոկղետիանոս անշարժ աչքով  
 „ինծի կընայէր, ու երբոր հայրս  
 „ան անիրաւ պատերազմին համար  
 „տաքութեամբ ու զօրաւոր խօս-  
 „քերով զինքը կարդարացընէր,  
 „ըսաւ Կայսրը . “Ա. մ'աշխա-  
 „տիր, քու ամմէն ջանքդիր վախ-  
 „ճանն ալ ունի, միսիթարվէ, բո-  
 „լոր թագաւորութեանս զօրու-  
 „թիւնը պատրաստ է քեզի օդնե-  
 „լու, թէ որ քու աղջիկդ Փիլո-  
 „մենանինծի կնութեան կսւտաս,, :  
 „Իմ ծնողքս աս բանը յանձն ա-  
 „ռին, ու երբոր տուն եկանք, աս  
 „մեծ բաղդը առջևս դրին, թէ հը-  
 „ոովմայեցւոց տէրութեանը կայ-  
 „սըրուհի պիտի ըլլամ: Աս առա-  
 „ջարկութիւնը ես մերժեցի, ու

„ըսի՞ թէ ես տասնըմէկ տարվան  
 „կուսութիւն ուխտած եմ ու բո-  
 „լորովին հիսուսի Քրիստոսի եմ:  
 „Իմ հայրս ուզեց զիս համոզը-  
 „նել, թէ ես իբրև անչափահաս  
 „տղայ, ու իբրև իր աղջեկը չեմ  
 „կրնար իմ վրաս հրամայել, ու  
 „իր իշխանութեան զօրութեամբը  
 „հրամայեց, որ յանձն առնում  
 „կարդլվել, նաև բարկութե-  
 „ամբ կրսպառնար: Իսյց իմ  
 „երկնաւոր փեսաս ինծի զօրու-  
 „թիւն տուաւ իմ հրաժարական  
 „խօսքիս վրայ հաստատուն մնա-  
 „լու: Հայրս յանձն չառնելուս  
 „համար մեծ դժուարութեան մէջ  
 „ընկաւ: Կայսրն ալ անոր ըսածը  
 „ուրիշ բան չէր սեպեր, բայց ե-  
 „թէ ակամայ ու սուտումուտ ջա-

„տագովութիւն մը : Ենձամբ ալ  
 „իմանալու համար . „Իմ առջևս  
 „բերէք , ըսաւ , իշխանուհին Փի-  
 „լոմենան , ես կուղեմ տեսնել ,  
 „թէ արդեօք կրնամ անոր առ ա-  
 „ռաջարկութիւնը հասկըցընել“:  
 „Տուն եկան ծնողքս զիս տանե-  
 „լու համար , և որովհետեւ հայրս  
 „չիկըցաւ զիս համոզցընել . շատ  
 „սպառնալիքներէն ու շողոքոր-  
 „թութիւններէն ետքը , մօրս հետ  
 „մէկտեղ առջևս ծունկ չոքեցաւ ,  
 „ու ըսաւ լալով . „Ողորմէ աղջիկս  
 „քու ծնողացդ . ողորմէ քու հայ-  
 „րեննեացդ ու մեր թագաւորու-  
 „թեանը վրայ“ : Ես ալ պատաս-  
 „խան տըւի . „Իմ մեծ հոգս Ես-  
 „տուածէ ու կուսութիւնը որ ին-  
 „քը կըսիրէ , քան թէ դուք , իմ

„Թագաւորութիւնս ու հայրենի-  
 „քըս երկինքն է“ : Այսպիսի խը-  
 „ռովութեան մէջ որոշեց հայրս,  
 „որ Կայսեր կամքը կատարէ, ու  
 „տարաւ զիս անոր : Առջի բերանը  
 „Կայսրը սիրով ու յարդութեամբ  
 „զիս ընդունեցաւ, բայց իր ամմէն  
 „խոստմունքը ու սիրոյ նշաններն  
 „արդիւնք մը չունեցան : Ետքէն  
 „ըսկսաւ սպառնալիքներ ընել,  
 „բայց տեսնելով որ օգուտ մը չու-  
 „նի՝ լի բարկութեամբ ու կատա-  
 „ղութեամբ սատանային դրդելո-  
 „վը հրամայեց որ զիսխորունկը բան-  
 „տի մէջ դնեն, որնոր իր պալա-  
 „տին զինարանին տակն էր : ‘Ձեռ-  
 „քըներս ու ոտվըներս շղթա-  
 „ներով կապած՝ զիս հոն դրին :  
 „Աս բանս ընելուն վախճանն ան

„Եր որպէս զի իրեն այնչափրաղ-  
 „ձալի ամուսնութեանը հասնի .  
 „ինչպէս որ ալ մարդկային ազգին  
 „թշնամին չարասէր սատանան որ-  
 „նոր ասոր սրտին կառավարն էր,  
 „աւելի զինքը կըբորբոքէր անմա-  
 „քուը բոցով : Իսանը չորս ժա-  
 „մը մէյ մը ինծի կուգաը ու կըփոր-  
 „ձէր . քիչ մը հաց ու ջուր տա-  
 „լու համար զիս քակել տուաւ ,  
 „ու ետքը նորէն տանջել ըսկսաւ :  
 „Այնպէս անամօթէր , որ զիս մէղ-  
 „քի շարժելու համար , չլոդիմա-  
 „նալու բաներ կընէր : Իայց աս-  
 „կից ալ պահեց զիս իմ երկնա-  
 „ւոր փեսաս . ես զիս միշտ կը-  
 „յանձնէի Ծիսուսին ու իր ամե-  
 „նամաքուը մօրը : Երբոր երսու-  
 „նը վեց օր այսպէս անցաւ , երկ-

„ցաւ ինծի երկնաւոր թագուհին  
 „արքայութեան լուսովը : Ինծի  
 „բերաւ ձեռքին վրայ իր տղան .  
 „ու ըսաւ . „Աղջիկս դեռ իրեք  
 „օր բանտին մէջ պիտի չարչար~  
 „վիս , բայց քսան օրէն ետև աս  
 „երկիրը թող պիտի տաս“ : Եւ  
 „դարձեալ ըսաւ . „Երբոր դուրս  
 „կելլես , իմ որդւոյս սիրոյն հա~  
 „մար զարհուրելի տանջանքներով  
 „դառն պատերազմ մը կըմնայ  
 „քեղի քաշելու“ : Աս բանս լը~  
 „սածիս պէս դող մը վրաս եկաւ ,  
 „ու կերևար թէ մահուան դուռը  
 „հասած եմ , բայց երկնից թա~  
 „դուհին քաջալերեց զիս ու ըսաւ .  
 „Աիրելի աղջիկս դուն ուրիշնե~  
 „րէն աւելի շատ սիրալի ես , ին~  
 „չու որ դուն իմ որդւոյս ու իմ ա-

„նունս կըկրես. քու անունդ լու~  
 „մենայ է. իմ որդիս քու փեսադ  
 „կրկոչվի՝ լոյս, աստղ ու արև։ Ես  
 „կանուանվիմ արշալոյս, աստղ ու~  
 „լուսին. իմ լոյսս կուգայ արևէն,  
 „ես քեզի կօգնեմ. բնութեան  
 „տկարութիւնը զքեզ հիմայ կը~  
 „վախցընէ, բայց ան ատենը շնորհ~  
 „քին զօրութիւնը զքեզ պիտի զօ~  
 „բացընէ։ Շաց՝ ի քուկին պահա~  
 „պան հրեշտակէդ քեզի իբրև իմ  
 „սիրելի աղջկանս օգնութեան պի~  
 „տի խրկըվի Կաբրիէլ հրեշտակը,  
 „որուն անունը զօրութիւն կը~  
 „թարգմանվի, որնոր աս աշխարհ~  
 „քիս վրայ իմ պահապանս էր։  
 „Եսապէս քաջալերեց զիս, ու ես  
 „ալ ըսկսայ հոգի առնուլ։ Ես~  
 „տեսիլքն աներեսոյթ ըլլալէն ետ~

„Քը՝ բանտին մէջ սաստիկ անուշ  
 „հոտ մը մնաց, որ զիս շատ կը-  
 „զուարձացընէր։ Շայց Դիտկղե-  
 „տիանոս յոյսը կտրելով որ եսի-  
 „րեն կամքը պիտի կատարեմ, ձեռք  
 „զարկաւ տանջանքներու ու չար-  
 „չարանքներու, որպէս զի վախցը-  
 „նելով կուսութիւնս կորսնցընել  
 „տայ, որնոր իմ Փեսայիս խոս-  
 „տացած էի։ Հրաման տուաւ, որ  
 „զիս մերկ իր արքունի ծառանե-  
 „որուն ու իր պալատին զինուորնե-  
 „որուն սողեւ սիւնի (Թէքէլէ) մը կա-  
 „պեն, ու ասկից ետքը հրամայեց  
 „ծեծելու ըսելով։ Ալովչետե  
 „այսպիսի յամառութեամբ ինձի  
 „պէս հզօր կայսեր հետ չուղեցիր  
 „կարգըմիւ չարագործի մը համար,  
 „որնոր իր ժողովուրդն ալ 'ի մահ

„Դատապարտեց, նոյնպէս դուն  
 „ալ արժանի ես, որ իմ արդարու-  
 „թենէս անոր նմանը քաշես“ :  
 „Ասկից ետքը երբոր բռնաւորը  
 „իմ մարմինս վիրալից ու արեան  
 „մէջ թաթխած տեսաւ նէ, միտ-  
 „քը դրաւ որ՝ ալ ինձի քիչ մը  
 „ատեն մնացած է ապրելու, ու թէ  
 „իմ հաւատքիս վրայ հաստատուն  
 „պիտի կենամ, անոր համար իմ  
 „վրաս վճիռ տուաւ բանտին մէջ  
 „մեռնելու՝ ուր գետնի վրայ քըս-  
 „քըոտելով զիս տարին : Ամմէն  
 „երկրաւոր միսիթարութենէ զըս-  
 „կըված երբոր կըսպասէի մեռնե-  
 „լու, որպէս զի իմ հոգւոյս ած-  
 „ային փեսային ձեռքը յաւի-  
 „տեանս հանդչիմ, մէյմ'ալ յան-  
 „կարծակի երկու լուսաւոր ու փայ-

„լակնացայտ հրեշտակներ ինծի  
 „երևցան, որոնք զիս աղնիւ եղով  
 „մը օծեցին, ու այնպէս կատարեալ  
 „առողջացուցին, որ առջինէն ա-  
 „ւելի աղէկ եղայ: Խակ կայսրը երկ-  
 „որորդ օրը աս բանս իմանալով,  
 „ու զիս աւելի գեղեցկացած ու  
 „առողջ տեսնելով զարմացաւ. ու  
 „զեց որ ինծի հաւտացընէ, թէ  
 „Արամաղդայ \*) գործքն է, որ-  
 „նոր հարկաւ կուղէ որ ես հռով-  
 „մայեցւոց տէրութեանը կայսը-  
 „որուհի ըլլամ: Ես ալ հոգւով

---

\*) Արամաղդ սրբան Պափոս ալ իւ-  
 սէնք, հելուանանելու ամմէն չառ-  
 պաւածնելուան հայրը իւսեղէին.  
 իւնիտին յեւալ շանը, ու ար-  
 ծիւէ վըսյ հեծած:

„սրբով լուսաւորած յանդիմանե-  
 ,ցի զինքը ցըցունելով թէ ան-  
 „տարակոյս պիղծ հոգին անոր չորս  
 „կողմս առած է, իսկ ինծի պատե-  
 „րազմելու օգնողը հոգին սուրբ է:  
 „Չէր գիտեր թէ ինչ պատաս-  
 „խան տայ, իր ամմէն աշխատան-  
 „քը անօդուտ էր սուրբ հաւատոյ  
 „համար տուած պատճառներս  
 „ցրելու: Աւստի կատղած առիւծի  
 „մը պէս բարկանալով հրաման  
 „տուաւ, որ զիս շուտ մը երկըթէ  
 „խարիսխի մը կապեն, ու ծովը  
 „նետեն, որպէս զի՝ թէ որ հոն  
 „թաղված մնամ, թէ ես ու թէ  
 „իմ յիշատակս ալ միշտ ջնջըվի:  
 „Բայց Յիսուս ցըցուց իր ամե-  
 „նակարող զօրութիւնը, ու խայ-  
 „տառակեց բռնաւորը, ու անոր

„աստուածները, խրկեց դարձեալ  
 „ան երկու փառաւոր հրեշտակ-  
 „ները, որոնք խարսխին վար իյ-  
 „նալու ատենն անանկ շուտ մը  
 „իմ կապս քակեցին, որ խարիսխը  
 „միայն Տիբերիս գետին մէջն ին-  
 „կաւ, ուր մինչև հիմայ հողին  
 „մէջ թաղված կըկենայ: Խոկ ես  
 „հրեշտակներուն թերին վրայ վեր  
 „վերցրված ջուրին վրայէն անցայ,  
 „առանց ամենեին թրջելու: Իո-  
 „լոր հոն եղած ժողովուրդը տես-  
 „նելով իմ այսպէս ջուրին վրայէն  
 „չիթրջած անցնելս շարժեցան,  
 „դարձան, քրիստոնեայ եղան:  
 „Իայց բռնաւորը յուսահատեալ  
 „մարդու պէս պոռաց, թէ աս գործ-  
 „քըս կախարդութիւն է, ու Փա-  
 „րաւոնէն աւելի սիրտը կարծրը-

„ոցընելով, հրամայեց որ Հռով  
 „մային մէջ քսքուտելով տանին  
 „ու ետքը նետերով խոցեն: Ետ-  
 „քէն տեսնելով զիս կէս մեռած,  
 „մարած ու բոլոր զօրութենէ ին-  
 „կած հրաման տուաւ դարձեալ  
 „բանտը դնելու, որպէս զի ան-  
 „միսիթար բանտարկված հոն մեռ-  
 „նիմ: Խսկ ամենակարող Աս-  
 „տուած իմ վրաս քաղցր թմրու-  
 „թիւն մը ձգեց, ու երբոր ար-  
 „թընցայ, առջինէն աւելի գեղեց-  
 „կացած ու առողջացած էի: Աս-  
 „բանս իմացաւ թէ չէ կայսրը,  
 „քարկացաւ, կրակ դարձաւ. հը-  
 „բաման տուաւ, որ դարձեալ ովս  
 „մերկ նոյն տեղը կեցընեն, բարակ  
 „ու սրածայր նետերով խոցոտեն  
 „մինչև որ մեռնիմ: Բայց Աս-

„տուած , որուն է բոլոր աշխարհ-  
 „քըս , աս հրաշքը դործեց , որ  
 „թէպէտ և նետ նետոզները կը-  
 „քաշէին իրենց աղեղը կընետէին,  
 „բայց նետերը իրենց տեղէն ա-  
 „մենեին չէին շարժեր : Բոնաւո-  
 „րը դարձեալ պոռաց թէ ես կա-  
 „խարդ կին մըն եմ , որ իմ կա-  
 „խարդութեամբս զիս կըպաշտպա-  
 „նեմ : Հրաման տուաւ որ նե-  
 „տերն աղէկ մը տաքցընեն , յու-  
 „սալով որ աս կերպով կախար-  
 „դութիւնս կըտկարացընէ : Քա-  
 „շեցին հանեցին դարձեալ լաթո-  
 „վրայէս , ու մերկ տանջելու կե-  
 „ցուցին : Աս տանջանքէն ալ աղա-  
 „տեց զիս իմ երկնաւոր Փեսաս ,  
 „ինչու որ տաքցած նետերը նե-  
 „տողներուն վրայ կըդառնային ,

„մինչեւ վեց հոդի անոնցմէ անմի-  
„ջապէս ինկան մեռան :

„Աս որ տեսան նէ , շատերը  
„դարձան հաւատքի եկան , ու ամ-  
„մէն ժողովուրդը վերջի աստիճա-  
„նի խռոված՝ ըսկսան քրիստո-  
„նէութիւնը պաշտպանել : Ան ա-  
„տենը վախնալով բռնաւորը որ  
„աւելի մեծ չարիք մը չըլայ , հը-  
„րամայեց որ գլուխս կտրեն : Այս-  
„պէս յաղթանակելով ու փառա-  
„ւորելով երկինք թռաւ հոդիս իր  
„աստուածային փեսայէն կուսու-  
„թեան պսակը առնելու : — Իմ  
„արիւնս թափիեցի կուսութեան  
„համար , ու յաղթութեան պսակը  
„առնելով Աստուածոյ տեսութեամ-  
„բը կըզմայլիմ : Իմ երջանիկ Աս-  
„տուածոյ առջևն ելած օրս ուրբաթ

„Եր (Օգոստոսին տասնին“ : —

„Ուզեց Աստուած որ նոյն օրն  
„ալ իմ մարմինս Առւնեանօ փո-  
„խադրըմի այնչափ փառաւորու-  
„թեամբ ու հրաշքներով“ :

Աս ծանօթութիւններն են , որ  
ուզեցինք տալ ՚իփառս և ՚ի պատիւ  
Արբուհւոյն : Խնչպէս որ ըսինք ,  
իրեք հոգւոյ եղած է աս յայտ-  
նութիւնը , որոնք մէկզմէկ չեն  
ճանչնար , ու մէկզմէկէ ալ հեռու  
կըքնակին : Իրեքն ալ դեռ կեն-  
դանի են , ու թէ ինչպիսի մար-  
դիկներ են զուրցեցինք : Խնչ որ  
աս իրեքն ալ Փրանկիսկոս քա-  
հանային պատմեցին՝ մէկզմէկու ը-  
սածին նման են , բայց ասկից չենք  
կրնար մտածել թէ ասոնք մէջեր-  
նին խօսք ըրած ըլլան վերի ըսած

պատճառներուն համար : Աս ծա-  
նօթութիւնները տապանագրին  
հետ բաղդատելով կը ճշմարտեն  
դարձեալ աս տեսիլքը :

Արբուհի Փիլոմենային տօնը կը-  
կատարվի Անւնեանօ (Օգոս' 10նին  
ութօրեայ տօնախմբութեամբ, ուր  
գացող բազմութեան թիւը համ-  
րանքի չի դար : Աւը որ անոր ա-  
նունը ինչպէս որ պէտք է հա-  
ւատով օգնութիւն կանչելու ըլ-  
լան, գժուարաւ կը պատահի որ  
իրենց խնդրուածքին չի հասնին :  
Ենոր պատկերովը գործըվոծ հը-  
րաշքները խիստ շատ ե . և խօս-  
քիս ճշմարտութիւնը ցըցունելու  
համար, ինչպէս որ ալ յառա-  
ջագոյն խոստացանք քանի մը հը-  
րաշքներ կը պատմենք աս տեղս,

որոնք յայտնի կը վկայեն, թէ  
երագահաս օգնական է ամենուն  
աս Արքուհին :

Վ իսկիանոս քաղաքը 1826ին  
տասնըմեկ տարուան տղայ մը հՅա-  
կովբ անունով Ուափայէլ ըսված-  
բժշկի մը որդի, երբոր ուրիշ տը-  
ղոց հետ հրապարակական ճամբու-  
վոյ կը խաղար, դինիի կառք մը  
անկից անցնելու ատեն, անիւը տը-  
ղուն աջ ոտքին վրայէն անցաւ,  
ու ոտքը ճըզմեց : Տղան հոն փրո-  
ված մնաց . Եկան առին զինքը  
տուն տարին, զանազան բժիշկներ  
եկան նայեցան տղուն ոտքին, բայց  
ամմէնքն ալ նոյնպէս իր հայրն  
աւ ըուընտնալու յոյս մը չիցըցու-  
ցին : Աւելի ծանրանալով հիւան-  
դութիւնը, Անտոնիոս անունով ե-

ըևելի վիրաբուժը (Ճեղանկը) կան-  
 չեցին, բայց արդէն հիւանդու-  
 թիւնը քաղցկեղի դարձած ըլլա-  
 լով, ու տղան ալ ինքը զինքը կոր-  
 սունցըցած, ան ալ բըժը շկը վելու  
 յոյսը կտրեց : Են ատենը լալ  
 ըսկսան ամմէնքը, բայց անոնց յու-  
 սահատութեամբ լալու ատեննին  
 ներս մտաւ Ապքատինոս «Ապ-  
 պոս անունով բարեպաշտ մարդ-  
 մը, որնոր հետը սրբուհի Փիլոմե-  
 նային պատկերը բերած էր : » Պա-  
 ջալերեց ասի աս խեղձերը, ու յոր-  
 դորեց որ սրբուհի Փիլոմենային  
 օգնութեանը դիմեն : Ուստի սուրբ  
 Աստուածածնայ Խիթանեան ըս-  
 կըսան զուրցել, որպէս զի՞ի պա-  
 տիւ սրբուհի Փիլոմենային, զիբենք  
 մխիթարէ : Աղօթքը լըմննալէն

Ետքը գնաց աս մարդը տղուն քռ-  
 վը , ու պոռալով Յակովը կանչեց ,  
 ու ցըցուց սրբուհի Փիլոմենային  
 պատկերը : Խնչ կընայիս անմիջա-  
 պէս ըսկսաւ տղան առողջի մը պէս  
 խօրաթել : Խմանալով ասոնք եղած  
 շնորհքը , տղուն ոտքը բացին ,  
 տեսան որ բոլորովին առողջացեր  
 է , բայց պղտիկ նշան մը մնացեր  
 էր : Աս որ տեսաւ տղուն հայրը ,  
 զարմացաւ մնաց , ուխտ ըրաւ որ  
 իր ստակովը 'ի պատիւ Արքուհւոյն  
 մեծ հանդիսութիւն մը ընէ : Քիչ  
 մը ետքը տղան բոլորովին բժշ-  
 կըվելով , առանց դժուարութեան  
 մը քալել ըսկսաւ , ան ատենը  
 հայրն ալ իր ուխտը կատարեց :  
 Աս պատմութիւնը տղուն հայրը  
 ու եղբայրը դրեցին . Փրանկիսկոս

քահանան ալ կըսէ իրեն համար  
թէ ես ալ տեսայ տղուն ոտքը,  
որուն ռոքին մատվըներէն մէկ  
քանին հիւանդութենէն թափած  
էր :

Կոմինեանօ ըսված գաւառը ժո-  
ղովրդապետական եկեղեցւոյն մէջ  
կայ սրբուհի Փիլոմենային պատ-  
կերը, որուն ժողովուրդը շատ մեծ  
ջերմեւանդութիւն կընէ մեծա-  
մեծ հրաշքներուն համար, և ա-  
սո՞նց մէկն ալ աս է, որ պիտի պատ  
մենք : Յուլիսին իննին 1827ին  
երսունը վեց թղաչափ բարձր տե-  
ղէ մը վար ինկաւ գլխիվար չորս  
տարուան տղայ մը Շասիլիոս կամ  
Շարսեղ անունով՝ Ներոնիմոս ու  
Փիլիկիա անուն ծնողաց զաւակ :  
Ինկածին պէս տղան՝ ըսկուր բեր-

նէն շողիքներ վազցընել, ու կեն-  
 դանի ըլլալուննշան մը չէր իտար :  
 Իոլոր ժողովուրդը, հայրը ու մայ-  
 րը հաստատեցին թէ մեռաւ : Խոկ  
 մայրը ուրիշ զաւակ չունենալով,  
 ըսկսաւ յուսահատիլ ու լալ, բայց  
 որովհետեւ ուրիշ անգամ սրբու-  
 հի Փիլոմենային մեծամեծ հրաշք-  
 ները տեսած էր, անոր համար հո-  
 գի առաւ, ու անոր վրայ ապաւի-  
 նելով, ըսկսաւ զինքն օգնութիւն  
 կանչել, ու կենդանի հաւատքով  
 առաւ տղան վաղելով ժամ տա-  
 րաւ, թէպէտ և տղան ամենելին չէր  
 զգար : Արբոր ժամ հտսաւ, տես-  
 նելով որ ժողովրդապետը Օքեպ  
 Աստուած Գոհաբանէն՝ երգը կեր-  
 գէ, Փիլոմենային պատկերին առ-  
 ջևս դրաւ իր տղան ու կսըսպա-

սէր . լըմընցածին պէս , աղաչեց  
կինը որ սուրբ Աստուածածնայ  
Ահմանեանըսէ Արքուհւոյն պատ-  
կերին առջել , թէպէտ և տղուն  
մարմինը արդէնպաղած էր , բայց մօ-  
րը հաւատքը դեռ կենդանի ու ջերմ  
էր : Երբոր սրբուհի Փիլոմենա ա-  
ղօթեաւ վասն նորա կըսէին , իրեք  
անդամ յայտնապէս շարժեցաւ  
պատկերը , ու ըսկսաւ տղան պո-  
ռալ , ու մայրը կանչել . վազեց  
մայրը ուրախութեամբ , գրկեց տը-  
ղան ու տուն բերաւ : Երկրորդ  
օրը ողջ առողջ ըսկսաւ պըտըտիլ ,  
ու այնպէս կատարեալ առողջա-  
ցած էր , որ և ոչ մէկ տեղը կոտրած  
կար , կամ վիրաւորած :

Բայց աս ետևի ըսելու պատ-  
մութենէս յայտնի կերևայ թէ իր

ջերմեռանդներուն ի՞նչպէս շու-  
 տով օգնութեան կրհասնի սրբու-  
 հի Փիլոմենան, որ առջի պատ-  
 մածներէս աւելի զարմանալի է:  
 Վասդէլվէթէրէ գաւառը Անարիա  
 Շիուսթինա անունով կին մը  
 1824ին Յունվարին մէջ դժուա-  
 րածին ըլլալով մօտ էր մեռնելու:  
 Ես բանս տեսնելով ասոր մայրը,  
 ուխտ ըրաւ սրբուհի Փիլոմենային՝  
 թէ որ աղջիկ ծնանելու ըլլայ նէ  
 անոր անունը դնէ: Հաղիւ թէ  
 անի աս աղօթքը ու ուխտն ըրաւ,  
 մեռած աղջիկ մը ծնաւ, որնոր ծը-  
 նանելու ատեն քիչ մը ձեռքը  
 շարժելուն համար դայեակը շուտ  
 մը մկրտեց ու ուրիշ անուն մը դը-  
 րաւ, չիգիտնալով մամուն ուխտը.  
 բայց մկրտութենէն ետքը ստու-

գիւ մեռած էր : Այրբոր թաղելու  
 վրայ էին , մամը վրան հասնելով  
 շատ ցաւեցաւ , կարծելով որ սրբ-  
 ութիւն Փիլոմենային անունը դրած  
 ըլլային , չէր մեռներ : Ի՞սկ ի վե-  
 րայ այսր ամենայնի յոյսը չիկտրե-  
 լով՝ խնդրեց սրբութիւն Փիլոմենային  
 օգնութիւնը ու այնչափ աղաւեց  
 ու աղօթք ըրաւ մինչև տեսաւ որ  
 մեռած տղան կըշարժի ու իբր թէ  
 հոգի տալու վրայ է : Ան ատենը  
 վաղեց ժամ տարաւ , ու անունը  
 Փիլոմենայ դնել տուաւ . անմիջա-  
 պէս աղջիկը առողջացաւ , ուսկից  
 մեծ ուրախութեամբ առաւ տուն  
 բերաւ , որ ամմէն տեսնողները  
 զարմացան մնացին . որնոր մինչև  
 հիմայ ողջ է , ու զինքն առողջացը-  
 նողին շատ մեծ ջերմեռանդութիւն

ունի : Աս պատմութիւնը հայրը  
մայրը ու մամը հաստատելէն ետ-  
քը, նաև իր քահանայ հօրեղբայրն  
աւ կըվկայէ :

Աս երկու իրեք պատմութենէն  
յայտնի կերեայ՝ թէ սրբուհի Փի-  
լոմենան իր չերմեռանդներուն ու  
զինքը օգնութիւն կանչողներաւն  
ինչպէս շուտով կըհասնի : Իսյց  
իր վարքը կարդալու ատեննիս լը-  
սելով անոր հաստատութիւնը իր  
խոստմունքին վրայ, չեմ ըսեր որ  
միայն զարմանանք, հապա նաև  
ամչնանք, որ հազար անգամ Աս-  
տուծոյ խոստմունք կընենք մեղ-  
քէն ետ կենալու ու չար ընկեր-  
ներէն հեռանալու, բայց ետքէն  
երբոր մեր չար կիրքերը ու ընկեր-  
ները իբր մեր հայրը ու մայրը ձե-

ւանալով մեղի կըշողոքորթեն, ան-  
միջապէս կըմոռնանք Աստուծոյ  
տուած խոստմունքնիս, ու անոնց  
կամքը կըկատարենք : Ուստի ա-  
ղաչենք աս Արբուհիին որ միջնորդ  
ըլլայ Աստուծոյ առջեր ու առ-  
նել տայ մեղի ան հաստատու-  
թիւնը, որ ինքն ունէր : “Ասե  
մենք ալ մեր կողմանէ ջանանք,  
որ Աստուծոյ մեղի տուած շնորհ-  
քին դէմ չիդնենք մեր չար գործ-  
քովը, որպէս զի սուրբ Գրիգոր  
Արքացիին ըսածին պէս չե-  
նմանինք անբժշկելի քաղքին որուն  
համար սուրբ գիրքը կըսէ „Բա-  
ժլլիւցաւ պէտիլն և ու բժշկիւ-  
ցաւ“ :



ԱՊՈՔԻՔ:

ՈՎԵՃ ամենակարող և բազում  
ողորմ, որ ընտրեցիր ու ընդունե-  
ցար սրբուհի Փիլոմենան քեզի սի-  
րելի դուստր, ու երկնաւոր շնոր-  
հօք լուսաւորեցիր, ամենամաքուր  
կուսութեան պարգևօք զարդարե-  
ցիր զանի, ու անշարժ հաստատու-  
թիւն տուիր անոր՝ քրիստոնէա-  
կան սր հաւատքին մէջ հաստա-  
տուն մնալու, որպէսզի աս ապա-  
կանացու աշխարհքիս մէջ քեզմէ-  
չիրամնըվի ամենեին. ու իրեն ար-  
դիւնքը աւելցընելու համար ուզե-  
ցիր որ դառն ու անտանելի չարչա-  
րանքներ ալ քաշէ համբերութը

քու սիրոյդ համար, ու քու տը-  
 ված շնորհքներդ անկորուստ պա-  
 հելու համար, որպէսզի իրեն փառ-  
 քը աւելնայ, ինչպէս վերջը յաղ-  
 թութեան պակն ալ շնորհեցիր  
 անոր, փառաւորելով զանի արքայ-  
 ութեան մէջ յաւիտեանս յաւի-  
 տենից: Եւ նաև աշխարհքիս մէջն  
 ալ ուզելով հռչակել սրբուհւոյն  
 անունը, իրը նոր գանձ յայտնե-  
 ցիր մեզի իր մարմինը՝ դեղքժկու-  
 թեան ամմէն հաւատացեալնե-  
 րուն. ու անհամար հրաշքներով  
 որ սրբուհւոյն բարեխօսութեամ-  
 բը կըկատարես, կուզես նորէն  
 հաւատացեալներդ շարժել քու  
 անունդ փառաւորելու, ջերմեռան-  
 դութիւն ընելով սուրբ Փիլոմե-  
 նային. արդ՝ փառաւորվի ու նր

ըլլայ քու անունդ նաև մեր վրայ,  
 որ քու Ածութեանդ առջեր ին-  
 կած կաղաչենք բարեխօսութեամբ  
 ու աղօթիւք սուրբ Փիլոմենային,  
 որ պակաս չընես մեր վրայէն քու  
 Երկնային շնորհքդ, տուր մեղի  
 սրբութիւն վարուց, որ աս աշ-  
 խարհքիս մէջ մեղաց որոգայթ-  
 ներէն զերծ ըլլալով, աղատ քեզի  
 ծառայենք, ու քեզի սիրելի ըւ-  
 լանք :

Ամուր պահէ զմեզ, ովլ բազ-  
 մագութ Ած, սրբուհւոյն միջնոր-  
 դութեամբը՝ ուղղափառ նր հա-  
 ւատքին մէջ, որ չըլլայթէ աշխարհ-  
 քիս դժուարութիւններէն յաղ-  
 թըլելով հեռանանք քեզմէ. ովլ  
 անհուն բարութիւն իմ Ած: Տուր  
 մեղի շնորհք հոգւոյ փրկութեան

Համար, ու փրկէ զմեղ յաւիտենական մահուանէ, որունչ ատ անգամ արժանի եղանք մեր ծանր ծանր յանցանքներուն համար, ու ազատէ զմեղ ամմէն երևելի ու աներևոյթ թշնամիներէն :

Իարեխօսութիւն Արբուհւոյն 'ի բարին ուղղէ մեր ամմէն գործքերը, որպէս զի քու շնորհօքդ ըսկսելով, 'ի փառս քո կատարենք մեր ամմէն բաներնիս : Շնորհք տուր մեղի, որպէսզի մենք ալ սրբուհի Փիլոմենային վարուցընըման ապրինք, ու մեր կեանքը ամմէն հոգեւոր պատրաստութեամբ կատարելով, արժանի ըլլանք արքայութեան փառացը, ու անոր հետ փառաւորելով օրհնենք զքեղ յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Առաջ Արքունիք Փելլանային՝ բար-  
ենթելիւն ու վարուց սրբութելիւն  
խնդրելու համար :

Ով սրբուհի կոյս Փիլոմենա,  
սիրելի հարսն երկնաւոր Փեսային  
· Քնի, հայելի կուսութեան ու սրբ-  
րութեան, երբոր կըմտածեմ քու  
մեծ հոգդ ու ջանքդ, ու զանա-  
զան դժնդակ չարչարանքներդ, որ  
սիրով յանձն առիր անարատ պա-  
հելու համար քու կուսութիւնդ  
ու սրբութիւնդ, ամմէն աշխար-  
հային բաները ոչինչ սեպեցիր,  
սատանային փորձութեանցը դէմ  
կեցար, որպէսզի միայն ԱՇ հա-  
ճելի ըլլաս, ու անոր հաւատար-  
մութենէ ետք չիկենաս մինչև քու  
վերջին կենացդ շունչը, կը զոջամ

մեծապէս ու կըցաւի սիրտս՝ իմ  
 այնչափ մեղքերուս վրայ, որ գոր-  
 ծեցի Այ դէմ, ու հոգ մը չունե-  
 ցայ մաքուր պահելու իմ հոգիս,  
 ու Այ արժանի բնակարան շինե-  
 լու: Քեզի կըդիմեմ հիմա ով  
 սրբուհի Փիլոմենա, քու գերա-  
 զանց սրբութեանդարդեանցը հա-  
 մար, խնդրէ Աստուծմէ ան վառած  
 սէրը, որ ես ալ բորբոքիմ Այ  
 սիրովը քեզի պէս ու լուամ իմ  
 այնչափ անօրէնութիներս արտա-  
 սուք զդջման ու ապաշխարու-  
 թեան: Ու հայցէ Աստուծմէ քու  
 հզօր բարեխօսութեամբդ ինծի  
 համար կատարեալ սրբութիւն  
 հոգւոյ ու մարմնոյ, որ Այ շնոր-  
 հօքը դէմ կենալով սատանային  
 ամմէն փորձութեանցը, որ միշտ

կլշանոյ զիս մեղքի մէջ ձգել ,  
 ու յաղթելով աշխարհքիս ամմէն  
 դժուարութեանցը , ու հեռանա-  
 լով մարմնոյ ամմէն բերկը ութիւն-  
 ներէն՝ միշտ սուրբ պահեմ իմ հո-  
 գիս ու մարմինս : Ընորհք ու զօ-  
 րութիւն խնդրէ Աստուծմէ ինծի ,  
 որ իմ կեանքս սրբութեամբ ան-  
 ցընելով , Այ ու Եկեղեցւոյ պա-  
 տուիրանները լաւ պահելով , չի-  
 հեռանամ ամենեին իմ Աստուծ-  
 մէս : Արդ՝ ով սրբուհի կոյս Փի-  
 լոմենա իս մի զրկեր քու հզօր  
 պաշտպանութենէդ . քեզի կը-  
 յանձնեմ իմ հոգիս ու մարմինս  
 ու ամմէն բանս , դուն հոգա , պաշտ-  
 պանէ , պահէ , որպէսզի և 'ի վախ-  
 ճանի արքայութեան փառացը ար-  
 ժանի ըլլալով քեզի հետ փառա-

ւորեմ զլ՛ծ յաւիտեանս յաւի-  
տենից . ամէն :

Առաջ Արքուհի Փէլմէնային՝ ո՛չ  
հաստատին մէջ հաստատութիւն  
ինդըելու համար :

Ովկ փառաւոր վկայուհի և  
կոյս հաւատարիմ Քնի Վնի , դուն  
որ Վնի սբ հաւատքը հաստա-  
տուն պահելու համար ամմէն տե-  
սակ դառն ու անտանելի շարչա-  
րանքները սիրով յանձն առիր .  
ու մէկդի ձգեցիր ամմէն բերկրու-  
թիւնները ու կորստական փառքը ,  
քու սիրելի Փեսայէդ Վնէն չի-  
զատվելու համար , որնոր զքեզ  
միշտ կըզօրացընէր իր ածային շը-  
նորհօքը . ահա կաղաչենք քեզի  
ով սրբուհի Փիլոմենա , որ խնդրես

Աստուծմէ մեզի համար ալ ան  
 անշարժ հաստատութիւնը, որով  
 հաստատուն կենանք մեր ուղղա-  
 փառ նբ հաւատքին մէջ, այնպէս  
 որ ոչինչ դժուարութիւն ու նե-  
 ղութիւն ու կամ մարդկային նը-  
 կատում մը կարող ըլլայ զմեզ զա-  
 տել Այ հաւատարմութենէ : Կա-  
 ղաչենք քեզի նբ կոյս Փիլոմենա,  
 նաև խնդրէ Աստուծմէ, որ աւել-  
 ցընէ մեր յոյսը, ու սէրը, որպէս-  
 զի յուսալով իրեն բարութեանը,  
 ու սիրելով զինքը ամմէն բանէն  
 աւելի, միշտ յառաջանանք իր նբ  
 ծառայութեանը մէջ . և 'իվախճա-  
 նի իբրև հարազատ որդիք կաթու-  
 ղիկէ ռովմէական նբ Ակեղեցւոյ  
 դաւանելով զՃշմարիտ հաւատքը  
 կարող ըլլանք աւանդել մեր հո-

Դին ԱՌ ձեռքը . ամէն :

ԱՌ ԱՌ ԱՌ Փիլոմենային  
ամէն նեղութեաններուն ա-  
գենը զենքը օգնութեան իան-  
շեւու համար :

Ո՞վ սրբուհի կոյս Փիլոմենա ,  
տեսնալով այնչափ անհամար հը-  
րաշքներդ , որ կըկատարես քու-  
բարեխօսութեամբդ՝ ամմէն տե-  
սակ նեղութիւններու մէջ ինկող-  
ներուն , բժշկելով զանոնք իրենց  
հիւանդութիւններէն , ու աղատե-  
լով իրենց ամմէն նեղութիւննե-  
րէն , մինչև միայն քու անունդ  
կանչելով , մեծամեծ օգնութիւն-  
ներդ , որով և կըհոչակվի քու  
պաշտպանութիւնդ ամմէն տեղ .

Հիմայ ես ալ ինկած քու առջեղ  
 քեզի կը վերցընեմիմաշքս ասնե-  
 ղութեանս մէջ, ով սր կոյս Փիլո-  
 մենա, որ քու հզօր բարեխօսու-  
 թեամբդ ազատես զիս, եթէ Ա.Յ  
 կամքն է ասեկած նեղութիւննե-  
 րէն, որ պաշարեր են զիս, և կամ  
 աս հիւանդութենէն, որուն մէջ  
 ինկած կը տառապիմ, որպէսզի  
 խալըսելով աս գժբաղդութենէս,  
 աւելի եռանդեամբ կարող ըլլամ  
 ծառայել Ա.Յ: Արդ՝ ողորմէ ինծի  
 ով Արքուհի, քու պաշտպանու-  
 թեամբդ. ու այնչափ հրաշքնե-  
 րուդ որ Ա.Յ կը կատարէ քու միջ-  
 նորդութեամբդ՝ ցուցուր մէկն ալ  
 իմ ողորմելոյս վրայ: Չեմ դադ-  
 րիր քու պաշտպանութիւնդ խըն-  
 դըելէն մինչեւ որ տեսնամ իմ խըն-

դրուածքիս կատարումը, վասնզի ե-  
 թէ ուրիշ ջերմեռանդներուդ կը-  
 նես սս բարութիւնը, ստոյգ դի-  
 տեմ որ իզմէ ալ չես զրկեր քու  
 մխիթարութիւնդ, որ մեծաւ ջեր-  
 մեռանդութեամբ կըդիմեմ քեզի:  
 Տայց ասի ալ կաղաչեմ ով սըր-  
 բուհի կոյս, եթէ կըտեսնաս որ  
 աս նեղութիւնը իմ հոգւոյս փլր-  
 կութեանը օգտակար ըլլայ պիտոր,  
 ան ատենը կըխնդրեմ որ առնուս  
 Աստուծմէ ինծի համբերութեան  
 չնորհք, որ սիրով ու յօժարու-  
 թեամբ քաշեմ աս ամմէն նեղու-  
 թիւնները, որ ԱՇԽրկերէ ու կը-  
 խրկէ իմ վրաս, որպէսզի իմ ար-  
 դիւնքս աւելնալով աս աշխարհ-  
 քիս մէջ, անդիի աշխարհքը ան-  
 պատմելի խնդութեամբ վայելեմ

իմ Ա, Ճաւիտեանս Ճաւիտենից .  
ամէն :

Եղբայր Արքունիկ Փէլոմենային՝ Բա-  
րե Տահ Խնդրելու հայալ :

Ով երջանիկ սրբուհի կոյս  
Փիլոմենա , օգնական ու պաշտ-  
պան քու ջերմեռանդներուդ , դուն  
որ սյնպէս սրբութեամբ ու առանց  
մեղաց՝ Ա, Սիրով վառված քու  
կեանքդ ՚ի փառս Ա, կատարե-  
ցիր , ու միշտ օգնական ունէիր  
քեզի Ա, քու ամմէն կենացդ մէջ ,  
մանաւանդ քու չարչարանացդ ու  
մահուանդ ատենը , երբ քու սի-  
րելի Փեսադ՝ Քահիր Ա, Ճային ազդե-  
ցութեամբը կըզօրացընէր զքեզ ,  
ու նը Ա, Ճածինն ալ սիրելի մօր  
պէս իր քաղցրութեամբը կըմիւ-

Թարէր զքեղ՝, որ վերջը յաղթա-  
 նակաւ արքայութեան մէջ զլո՞ծ  
 փառաւորես, ու վայելես իր բա-  
 րութիւնը. արդ՝ կաղաչեմ քեղի  
 մեծաւ թախանձանօք ով Արքուհի  
 կոյս Փիլոմենա, որ խնդրես Աս-  
 տուծմէ՝ որ շնորհք ու զօրութիւն  
 տայ ինծի լաւ պատրաստութիւն  
 տեսնելու մահուանս . չըլլայ որ  
 յանկարծակի ու առանց պատրաս-  
 տութեան ելլեմ աս աշխարհքէս:  
 Կաղաչեմ քեղի ով երջանիկ  
 կոյսդ, Քնի քաշած չարչարանք-  
 ներուն համար, ու նաև քու չար-  
 չարանացդ արդեանցը համար, քու  
 հզօր բարեխօսութեամբդ շնորհք  
 առ ինծի Աստուծմէ, որ հիմակվը-  
 նէ հեռանամ ամմէն մեղքէ փախ-  
 չելով սատանայէն ու իր չարգործ-

քերէն , ու առանց մեղաց ապրիմ  
 մինչև մահուանս ատենը , ու ան  
 ատենն ալ ճշմարիտ զղջմամբ կա-  
 տարեալ խոստովանութեամբ ու  
 արժանաւոր ապաշխարութեամբ  
 ու ՚Քնի սբ մարմնոյ ընդունելու-  
 թեամբը կատարեմ իմ կեանքս :  
 Աղորմէ ինծի քու հզօր պաշտպա-  
 նութեամբդ ով սրբուհի Փիլոմե-  
 նա ան սոսկալի ատենը մեռնելուս  
 օրը , այնպէս որ թէև կարող չը-  
 լամ ան ատենը աղաչել քեզի  
 ամմէն զգայարանքներս կորսնցը-  
 նելով , սակայն մի մոռնար զիս ,  
 այլ հիմակվան աղաչանացս նայե-  
 լով , որ կընեմ քեզի , բեր ինծի  
 ՚Ծային օգնութիւնը , որն որ պա-  
 կաս չըլայ քովէս , որ յաղթէսա-  
 տանային , ու ցըռուէիր զօրութիւն-

ները որ չիկրնայ յաղթել ինծի :  
 Հիմակվընէքու բարեխօսութեա-  
 նըդ կըյսնձնեմ բոլորովին իմ հո-  
 գիս . ով սրբուհի կոյս Փիլոմենա ,  
 որպէս զի մահուանս ատենը հո-  
 գաս իմ հոգւոյս փրկութիւնը :  
 Են ետքինեղութեան ատենը քու  
 միջնորդութիւնը իղմէ մի հեռա-  
 ցըներ , ու ան սոսկալի ըոպէն իս քու  
 միսիթարութենէդ մի զըրկեր :  
 Օջոււթիւն առ ինծի Եստուծմէ ,  
 որ կարող ըլլաման ատենը հային ,  
 որ Եժածնայ ու քուկին քաղցր  
 անունդ սրտանց կանչել ինծի օգ-  
 նութիւն , որ փախչին ամմէն սա-  
 տանաները , ու չիկրնան իրենց փոր-  
 ձութիւններովը վեաս մը բերել  
 իմ հոգւոյս , և ես ալ խալըսելով  
 աս ապականացու աշխարհքէս ա-

Նարատ վարուք, արժանի ըլլամ  
արքայութեան մէջ քեզի հետ փա-  
ռաւորելու զլու յաւիտեանս յա-  
վիտենից. ամէն :

Գ. Ականոնը աղօլութելուն Բէին  
աւ, արած իւնաճէ սրբուհի Փէլ-  
մենան, և պաղպան, առ ո՛ւ Ա. ս-  
տուածածինն, այ իւսովէ Ականոնիւ-  
ութեան շատ հրաշնելու Բէջ  
շունացած է Արքուհին լե շատ հա-  
ճէլ և էրեն ո՛ւ Աստուածածինայ  
զէրմետանդուինը, առ անու գի-  
դը, հանաւանդ Ականոնիայով ա-  
նու աղօլութելու :











